# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՂՈՒՐՍԱԼԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔ**

**Գ. ՂՈՒՐՍԱԼ ,հեռ. 093586276**

**թիվ 054/74**

**30.10.2015թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու 20.10.2015թ. թիվ 23-Ն, 24 և 25 որոշումները:

Առդիր 5 թերթ:

Ղուրսալի համայնքի ղեկավար Միեր Մինասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ղուրսալ համայնք, հասցե գ. Ղուրսալ,

Հեռախոս՝ 093-58-62-76
էլ.Փոստ՝ ghursal.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2015 թվականի N 25

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ղուրսալ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 17Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ղուրսալ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Վարդան Չիլինգարյան | [signature] | | |
| 2.Դավիթ Մինասյան | [signature] | | |
| 3.Վերգինե Կարապետյան | [signature] | | |
| 4.Աբրիկ Ազոյան | [signature] | | |
| | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] ՄՀԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ղուրսալ համայնքի ավագանու
2015 թվականի 20-ի հոկտեմբերի N 25 որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Արմիկ Մանուկյան Պողոսի 50.000 (հիսուն հազար) դրամ,
(անուն, ազգանուն,հայրանուն)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 50.000 (հիսուն հազար) դրամ:

ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՂՈՒՐՍԱԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալ համայնք,
Հասցե գ.-Ղուրսալ,
Էլ. փոստ ghursali.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24
20.10.2015թ.

Լոռու մարզի Ղուրսալ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ մասերով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ, 72-րդ և 78-րդ հոդվածներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Ղուրսալ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ղուրսալ գյուղական համայնքի ավագանու 02.09.2015թ. թիվ 18 որոշումը ,,Ղուրսալի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին՛՛:

| հ/հ | համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Չիլինգարյան Վարդան | | | |
| 2. | Մինասյան Դավիթ | | | |
| 3. | Ազրյան Աբրիկ | | | |
| 4. | Կարապետյան Վերգինե | | | |

Ղուրսալ համայնքի Ղեկավար՝ Միեր Մինասյան

Հավելված
Ղուրսալ համայնքի ավագանու
20.10.2015թ. թիվ 24 որոշման

ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 7

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորների թիվը | Պաշտոնական դրույքաչափերը (հազար դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 150.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 81.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 115.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 105.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 100.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 74.0 |
| *Տեխնիկական անձնակազմ* | | |
| Հավաքարար | 1 | 73.0 |
| Ընդամենը | 7 | 698.0 |

Ղուրսալ համայնքի
ղեկավար՝

Մ.Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ
Ղուրսալ համայնք, գ. Ղուրսալ, հեռ. 093-58-62-76
էլ. հասցե ghursali.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** 23-Ն

**«20» հոկտեմբերիի 2015 թվականի**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ''ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ'' 02.09.2015Թ. ԹԻՎ 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ղուրսալի համայնքի 2015թ.-ի բյուջեն հաստատելու մասին 02.09.2015թ. թիվ 20-Ն որոշումը շարադրել նոր խմբագրությամբ:

   Հաստատել Լոռու մարզի Ղուրսալի համայնքի 2015թ. բյուջեն

   1. Եկամտային մասով՝ վարչական մասով՝ 11599.7 հազար դրամ
   2. Ֆոնդային մասով՝ 0 դրամ

   1. Ծախսային մասով՝ վարչական մասով՝ 11599.7 հազար դրամ
   2. Ֆոնդային մասով՝ 1229.4 հազար դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Վարդան Չիլինգարյան | | | |
| 2.Դավիթ Մինասյան | | | |
| 3.Վերգինե Կարապետյան | | | |
| 4.Աբրիկ Ազրյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ (ստորագրություն) ՄՀԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ (Անուն, ազգանուն)